

ՏՈՐԲ (ՏՈՒՐԲ) ԱՆՊԵՂԻ ԱՌԱՍՊԵԼԻ ՎԵՐԱՊՐՈՒՆՆԵՐԸ «ՇԵՐԵՖ-ՆԱՄԵ»-ՈՒՄ

Մովսես Քորենացին բազմաթիվ գրույցների, ավանդությունների և առասպելների հետ միասին պահպանել և մեզ է հասցրել նաև Տորբ (Տուրբ) Անդեղի մասին նշանավոր առասպելը։ Այդ առասպելը ամենայն հավանականությամբ ստեղծվել և պատմվում էր առաջին հերթին Արևմտյան Հայաստանի Անդեղ-տուն գավառում։ Եստիկոյով Հայաստանում հախարարական տների ծագման և հայոց թագավոր Վաղարշակի կողմից Հայաստանի առերևույթ շրջանների կառավարումը նրանց հանձնելու ավանդությունը, Մովսես Քորենացին կանգ է առնում նաև Անդեղ-տուն վրա՝ «Եւ զայր,— գրում է նա,— խոժոռացել և բարձր և կոպտարանձն և տափակաբիթ, խորակն և զմնահայեաց, ի դուակէ Պատրամայ, ի Հայկաթոռնէ, Տուրբ անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահագիւթեանն ձայնէին Անդեղեալ, վիթխարի հասակաւ և ուժով, հաստատէ կուսակալ արեւմտից, և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անդեղ տուն։ Իայց եթէ կամի՞ սաւմ ա ես յազազս նորոտանյաճ և փցուն, որպէս և Պարսիկը վասն Ռոստոմայ Սաղճկի հարիւր և բասն փզոց ոյժ աւեն ունել։ Դանդի կարի իմն անյարմար թուէին և նմա երգ բանից վասն ուժեղութեանն և սրտեայ լինելոյն։ որք ոչ Սամսունի և ոչ Հերակլեայ և ոչ Սաղճկին յարմարին այս գրույցը։ Դանդի երգէին նմա բուռն հարկանել զոյժաբար վիմաց ձեռքը, ուր ոչ զոյր զեզութիւն, և ճեղքել բառ կամաց մեծ և փոքր, և յերկ լեղնդամբքն և կաղմել որպէս տախտակ, և զրել նոյնպէս եղնդամբք իւրովք արծուիս և այլս այսպիսիս։ Եւ յեղեր ծովուն Պոնտոսի զիպեայ նաւաց թշնամաց զիմէ ի վերայ, և ի խաղալն նոցա ի խորն իրրե ասպարէզս ութ, և առ ոչ ժամանեալ նոցա՝ աւնու, աւեն վէմս բլրաձեւ, և ձղլ զկնի, և ի սաստիկ պատառմանէ, ճուրցն ընկղմին նաւը ոչ սակաւք, և ամբարձումն ալեացն, որ ի պատառմանէ ճուրցն, վարժմնացեալ նաւն բազում մղոնս։ Ո՛հ, կարի է առասպելս, այլև առասպելաց առասպել։ Իայց քեզ զի՞ է, քանզի էր արդարեւ սաստիկ հզօր և այսպիսեաց գրուցաց արժանի»։

Անդեղ տան հախարարությունն ծագման մասին այս առասպելի արձագանքները հանդիպում են նաև Անանուս պատմիչի մոտ, որի բնագիրը մտել է Սերեոսի Պատմությունից մեզ հասած ոչ ձեռագրերի մեջ։

Հետաքրքրական է, որ Տորբ (Տուրբ) Անդեղի մասին այս ավանդությունը լայն տարածում է ստացել նաև մուսուլմանական աշխարհում։ XVI դարի առաջին կեսի քուրդ պատմիչ Շերեֆ-էդ-դին Իթիլիսի «Շերեֆ-նամե»-ում մենք հանդիպում ենք հիշատակություն լայն տարածում գտած մի գրույցի մասին, որը հանդիսանում է մեր Տորբ Անդեղի առասպելի վերադարձը։

Շերեֆ-էդ-դինը իր աշխատությունից մի գլուխը նվիրել է Մարդասիրների քրդական զեղի պատմությունը։ Մարդասիրները սկզբնական շրջանում՝ XI դարում տիրում էին Հայկապոմ։ Նրանց մի ճյուղը հետադադում հաստատվել էր Ազրի-ում, որը ոչ այլ ինչ է, քան Անդեղ-տունը։ Շերեֆ-էդ-դինը մանրամասն նկարագրում է ոչ միայն Մարդասիրների հարստությունը պատմությունը, այլև այդ հարստության հաստատված վայրը՝ Անդեղ-տունը։ «Ազիրը,— գրում է նա,— մի բերդ է, որ զանգում է մի բարձր լեռան լանջին։ Այդ լանջը սակայն այնքան է ծոված, որ նրան հայելիս մարդուն վախ ու սարսափ է տիրում։ Մի բոլորիս հայտնի գրույց է պատմվում բերեն-բերան և լեզվից-լեզու, որ իբր ասածու սրբերից մարդարեններից մեկը հասել է այնտեղ և բուրբերեն (թուրքական բառով կամ թուրքական արտասանությամբ—բերաֆղե բուրբ) մի ակնարկ է արել այդ լանջին և լանջը ասածու ամենակարող զորությանը ծովել է, ճշմարտությունը միայն ասածուն է հայտնի։ Սակայն աշխարհը, որ բնակվում է այդ բերդում և վիլայեթում, կոչվում է Մարդասիր»։

¹ Մովսիսի Քորենացու Պատմությունը Հայոց, Տիգրիս, 1913, էջ 114—115։

² Սերեոսի Եպիսկոպոսի Պատմությունը, Երևան, 1939, էջ 7։

³ Chêref-Nameh ou lasts de la nation Kourde par Chêref-ou'ddine, Prince de Bidlis, dans l'Alialet d'Arzeroum, traduits du Persan et commentes par François Bernard Charmoy, tome I, premiere partie, St-Petersbourg, 1868, էջ 770 և հետ Տե՛ս նաև Стэнли-Лэн-Пьяль, Мусульманские династии, СПб, 1899, էջ 92—93։

⁴ Chêref-Nameh ou Histoire des Kourdes par Chêref, Prince de Bidlis, publiée par Veltaminof-Zernof, St-Petersbourg, 1860, t. I, էջ 177։ Պարսկերեն բնագրի սույն պարբերությունը մեզ համար թարգմանել է Հակոբ Փափաղյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը։

Շերեֆ-էղ-ղինի աշխատության մեկ հետաքրքրող վերահիշյալ հատվածի ֆրանսերեն թարգմանությունը, որ կատարել է Շարմուան, հետևյալն է. «Il circule dans toutes les bouches et sur toutes les langues une tradition généralement connue, suivant laquelle un *Ami* (Elu) de *Dieu* (un saint personnage) serait venu dans cette contrée et aurait indiqué cette roche *en lui donnant un nom turk*)⁵, de sorte qu'elle serait effectivement devenue toute *tortue* par un effet de la toute-puissance du Créateur»⁶.

Շարմուան un nom turk-ից հետո իր կողմից ավելացրել է. «probablement اگرى eöry, en russe кривыя» և բացատրել, որ Eöry-ի առաջնաբանությունը հնչյունը իր համադրվելի հետ փոխարինվելով, թուրքական էզրի բառը փոխվել է էզլի-ի, որտեղից էլ առաջացել է էզլի-ը, վայրի անունը⁷:

Շերեֆ-նամե-ի այս պարբերության վրա ուշադրություն է դարձրել նաև Աստ. Խաչատրյանը՝ նա այս առթիվ գրել է. «Այս ամենքին ծանոթ ավանդությունը մի սուրբ մարդու վերաբերյալ, որը կապված է եղել Անդղ բերդի հետ, արդյոք հեռավոր արձագանքը չէ՞ այն բանին, որ Անդղը բնակավայր է եղել մի հոր աստծու և նշանավոր սրբավայր»:

Պարզ է, որ նման բացատրությունները մեզ բավարարել չեն կարող առասպելի իմաստը հասկանալու համար: Եվ եթե նույնիսկ Շարմուայի ենթադրությունը ճիշտ համարենք և բնդունենք նրա բացատրությունը, բոլոր դեպքերում այդ բացատրությունը չի հեռանում ժողովրդական ստուգաբանությունից և հարցը դիտականորեն լուծել չի կարող: «Բելաֆղե բորի»-ի կապակցությամբ ընդգծենք, որ մենք զործ ունենք ոչ թե «բուրբ» «բուրբերեն» բառի հետ, այլ Տորբ անվան հետ: Ամբողջ պատմվածքից երևում է, որ «թուրք-երեն» (բելաֆղե բորի) բառը ոչնչով չի կապվում առասպելին, «թուրք» բառը այստեղ անտեղի է: Շերեֆ-էղ-ղինը, ինչ խոսք, նրա տակ «բուրբ» է հասկացել, ամենայն հավանականությամբ մուսուլմանական շրջանում այդ առասպելի մեծ ազդեցություն էր հասկացել են «Տորբ»-ը, այդ անունը այգալիսի գույքորդում է տվել, բայց որ նրա տակ թաքնված է մեր Տորբ-Տուրբը, կասկածի ենթակա չէ: Այդ եզրակացությունը ենք հանդուս ոչ միայն անվան նմանահնչյունությունից ելնելով, այլև նրանից, որ այդ առասպելը կապված է Ազլի-ի՝ Անդեղ-տան հետ և՛ դա զեռ բոլորը չէ: Ըստ Շերեֆ-էղ-ղինի, այդ «աստծու սուրբ» «ափնարի է արել այդ լանջին և լանջը... ծովել է»: Այս, ինչ խոսք, որ համապատասխանում է և վերապրուկն է Մովսես Խորենացու՝ Տորբ-Անդեղի մասին գրած այն երգի, որի համաձայն Տորբը «բուրբն հարկանել զորձաբար վիմաց ձեռք, ուր ոչ գայր զեղու թիւն, և ճեղքել բաւ կամաց մեծ և փոքր» և բերել եղնգամբն և կազմել որպէս տախտակ...»:

Տորբ-Անդեղի առասպելը կապված է եղել Անդեղ-տան հետ, մի վայրի, որի հետ հայկական ավանդությունը կապում էր իր պետականության առաջացումը: Այն մեծ նշանակություն է ունեցել նաև որպէս պաշտամունքային կենտրոն⁸: Ըստ Փավստոս Բուզանդի. Անդեղ-տունը «ոստան արքունի լեալ էր վաղ»⁹: Նույն պատմիչի ասելով, այնտեղ էին թաղված հայոց բազմաթիվ թագավորներ, այնտեղ էին պահվում արքունի դանձեր¹⁰: Այդ իսկ իմաստով Անդեղ-տան, որպէս հայկական նշանավոր քաղաքական ու պաշտամունքային կենտրոններից մեկի, և նրա հետ կապված առասպելների ուսումնասիրությանը առհասարակ նպաստող յուրաքանչյուր փաստ ունի կարևոր նշանակություն: Շերեֆ-էղ-ղինի վկայությունը այդ տիպի փաստերից է: Նա ցույց է տալիս, որ Տորբ-Անդեղի ավանդությունը երկար ժամանակ երգվելով հայերի մոտ, տարածում է գտել նաև մուսուլմանական աշխարհում:

Հ. ԲԱՐՔԻՆՅԱՆ

⁵ Ընդգծու թև իմն է—Հ. Բ.:

⁶ Cheref-Nameh, ...traduits du Persan et commentés par F. B. Charmoy, t. II, première partie, St.-Petersbourg, 1873, էջ 17—18:

⁷ Նույն տեղում, տե՛ս նաև t. II, second partie, էջ 17—18:

⁸ Աստ. Խաչատրյան, «Տորբ Անդեղեալ» հայ հին մատենագրության և նոր բանասիրության մեծ: «Տեղեկագիր» ՀՊՊՀ Գիտություն և արվեստի ինստիտուտի, 1981, № 3 էջ 58, ծան. 2:

⁹ Гр. Капанцян, Хайаса — колыбель армян, Ереван, 1948, էջ 200:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ «Փավստոսի Բուզանդացու Պատմություն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 317:

¹² Նույն տեղում, էջ 219, 308: